ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1952 Общественные науки

Արշ. Խաչատրյան

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ԻՐԱՆ

Ամերիկյան իմպերիալիզմի ներթափանցումը Իրան սկսվել է դեռևս նախքան առաջին համաշխարհային պատերազմը։ 1907 թ. անգլիական իմպերիալիզմի և ռուսական ցարիզմի միջև կնքված համաձայնությունից հետո, ըստ որի Հյուսիսային Իրանը անցել էր ցարական Ռուսաստանի, իսկ Հարավային Իրանը՝ Անգլիայի սֆերայի ազդեցության տակ, ամերիկյան իմպերիալիստները ձգտելով Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից պոկել շահագործման իրենց բաժինը, սկսում են գործել «տնտեսական խաղաղ ներթափանցման» և «բաց դռների» քաղաքականության լոզունգներով։

Իրանի կառավարող շրջանները հեշտությամբ են համակերպվում ամերիկյան էքսպանսիոնիստների ներթափանցման այդ քաղաքականությանը։ 1911 թ. ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը Իրան է գործուղում իր հատուկ միսիան՝ ֆինանսիստ Մորգան Շուստերի գլխավորությամբ։

ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը Իրանի բնական հարստությունները, հատկապես հյուսիսային նավթահանքերը, իր ձեռքը կենտրոնացնելու նպատակով 1921 թ. սկսում է բանակցություններ վարել իրանական կառավարության հետ։ Բանակցությունները տեղի են ունենում Վաշինգտոնում՝ ԱՄՆ-ի իրանական դեսպան Ալանի հետ։ Այդ բանակցությունների ընթացքում էքսպանսիոնիստները ամեն միջոց գործադրում են, որպեսզի իրենց ձեռքը վերցնեն Իրանի հյուսիսային նավթահանքերի շահագործումը։ Բանակցությունների հետևանքով Ամերիկայից բժիշկ Միլսպոյի ղեկավարությամբ Իրան են գործուղվում մի խումբ տնտեսական «խորհրդատուներ»։

Ըստ Միլսպոյի՝ Իրանի դեսպան Ալանը Վաշինգտոնում հանդես գալով հայտարարել է, որ «նրա կառավարությունը ցանկանում է Հյուսիսային Իրանի կոնցեսիաների մասին ամերիկյան ընկերությունների հետ բանակցության մեջ մտնել, կապելով այդ կոնցեսիաները 10 միլիոն դոլար վարկ ստանալու հետ»[2]։

Սովետական կառավարությունն իր արտաքին քաղաքականության ընթացքում ղեկավարվելով ազգերի հավասարության մարքս-լենինյան սկզբունքներով և նորից հայտարարելով իր վճռական հրաժարումը ցարական իմպերիալիզմի գաղութային, բռնատիրական քաղաքականությունից, 1921 թ. փետրվարի 26-ին կնքված Սովետա-իրանական պայմանագրում հայտարարեց՝

«...Ցանկանալով տեսնել պարսիկ ժողովրդին անկախ, ծաղկող և իր բոլոր միջոցների ազատ տնօրինող, Ռուսաստանի Սովետական Կառավարությունը հայտարարում է բոլոր պայմանագրերը, դաշնագրերը, կոնվենցիաները և համաձայնագրերը՝ կնքված ցարական նախկին կառավարության կողմից

[1] История дипломатии, том II, стр. 72.
[2] Millspaugh A. Americans in Persian. Washington, 1925 y. p. 7.

Պարսկաստանի կառավարության հետ, որոնցով պարսկական ժողովրդի իրավունքները ոտնահարվել են, վերացված և իրենց բոլոր տեսակի ուժերը կորցրած»[1]։

Այդ նույն պայմանագրով Սովետական կառավարությունը անվավեր հայտարարեց նախկին բոլոր տեսակի ստրկացուցիչ փոխառությունները, որոնք տրված էին Իրանին Ռուսաստանի կողմից 67,500 հազար ոսկի ռուբլու գումարով, ինչպես և հրաժարվեց գոյություն ունեցող բոլոր տեսակի կոնցեսիաներից, նրանց հողաբաժիններից, դրանք բոլորը անվճար հանձնելով Իրանին։

Ամերիկյան իմպերիալիստները սկսեցին ամեն ջանք գործադրել, որպեսզի Սովետական Կառավարության այդ ակնիվ քաղաքականության հետևանքով Իրանում ստեղծված դրությունը օգտագործեն իրենց գավթողական նպատակների համար։

Ամերիկյան նավթային մագնատ «Ստանդարտ օյլ» ընկերությանը հաջողվում է Իրանի միանգամայն թույլ կառավարության հետ կնքել համաձայնություն, որով ձեռք է բերում երկրի հյուսիսային նավթահանքերի շահագործման իրավունքը։ Դրանից հետո ամերիկյան իմպերիալիստները սկսում են բանակցություններ վարել «Անգլո-իրանական նավթային ընկերության» հետ, համաձայնում են բաժին հանել նրանց՝ երկրի հյուսիսում գտնվող Խորասանի նավթահանքերը, որի փոխարեն անգլիական նավթային ընկերությունը պարտավորվում էր թույլատրել «Ստանդարտ օյլին» շահագործելու Իրաքում Մուսուլի նավթահանքերը։

Ամերիկյան իմպերիալիստները Իրան ներթափանցման հենց առաջին օրերից բախման մեջ մտան անգլիական իմպերիալիզմի հետ, որը 20-րդ դարի սկզբին՝ օգտվելով Իրանի տնտեսական և քաղաքական թուլությունից, շանտաժի գործադրման միջոցով իր ձեռքն էր կենտրոնացրել երկրի հարավային շրջանների չափազանց հարուստ նավթահանքերը։

1901 թ. ավստրալիացի միլիոնատեր դ՝Արսինը, անգլիական կառավարության օժանդակությամբ, Մուզաֆֆեր էդ-դին շահից 60 տարի ժամանակով ստացավ Իրանում 1,295 հազար քառ. կլմ. տարածությամբ նավթատար հողերի կոնցեսիայի իրավունք[2], այսինքն Իրանի ամբողջ տերիտորիայի $^{0}/_{6}$ մասը։

Այս կոնցեսիայի հիման վրա 1903 թ. ստեղծվեցին «Ֆերստ էքսպլոյտեշեն կոմպանի» և «Բահտիարի օյլ կոմպանի» ակցիոներական ընկերությունները։ 1909 թ. կազմակերպվեց «Անգլո-պարսկական նավթային ընկերությունը», որը 1935 թ. վերանվանվեց— «Անգլո-իրանական նավթային ընկերության»։ Առաջինի ստեղծմամբ իրենց գործունեությունը դադարեցրին վերոհիշյալ երկու ակցիոներական ընկերությունները, տարալուծվելով վերջինիս մեջ։

Նկնելով իմպերիալիստական իր հեռանկարային պլաններից, անգլիական կառավարությունը 1914 թ. տիրապետեց «Անգլո-պարսկական նավթային ընկերության» ակցիաների 52,5 տոկոսին, որով իր ձեռքը վերցրեց ընկերության կոնտրոլ ծրարը և դարձավ նրա տերն ու տնօրենը[4]։

Այսպիսով, «Անգլո-իրանական նավթային ընկերության» ակցիաներում

[1] Советско-персидский договор 26 февраля 1921 г., Статья 1.
[2] Ernest Adams, Oil in the Middle East, p. 24, 1946 y.
[3] Вопросы экономики, № 9, стр. 67—68, 1951 г.
[4] Там же.

զուգակցվեցին անգլիական ֆինանսական կապիտալի և անգլիական կառավարության շահերը ճիշտ այնպես, ինչպես բնորոշել է միջազգային պրոլետարիատի հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինը իր «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» պատմական աշխատության մեջ.

«...Թե ինչպես ֆինանսական կապիտալի դարաշրջանում մասնավոր և պետական մոնոպոլիաներն ի մի են հյուսվում, թե ինչպես և՛ առաջինները, և՛ մյուսներն իրապես հանդիսանում են լոկ առանձին օղակներն այն իմպերիալիստական կռվի, որ մղում են իրար դեմ խոշորագույն մոնոպոլիստներն աշխարհը բաժանելու համար»[1]։

«Անգլո-իրանական նավթային ընկերության» նավթի հանույթը իր քանակությամբ կապիտալիստական աշխարհում ԱՄՆ-ից և Վենեցուելայից հետո բռնում է երրորդ տեղը, և անգլիական իմպերիալիզմի համար ունի չափազանց խոշոր նշանակություն, այն է՝ ա) անխափան կերպով վառելանյութով ապահովել անգլիական ռազմական և առևտրական նավատորմիղը, բ) ապահովել վերահսկողությունը Հարավային Իրանի և Պարսից ծոցի վրա, որով և ապահովում են դեպի Հնդկաստան տանող ուղիները, գ) իրանական ժողովրդի գաղութային շահագործմամբ ստանալ հսկայական գերշահույթ։

Ինչպես մատնանշեցինք վերևում, «Ստանդարտ օյլի» ձգտումները՝ տիրապետել Իրանի հյուսիսային նավթին, չեն պսակվում հաջողությամբ։ Իրանի մեջլիսը, պրոգրեսիվ հասարակայնության բողոքի և ճնշման ազդեցության տակ, 1922 թ. նոյեմբեր ամսին չի վավերացնում «Ստանդարտ օյլի» հետ կնքած պայմանագիրը։

Ամերիկյան իմպերիալիստները չեն հրաժարվում Իրանը, նրա օգտակար հանածոները իրենց տրամադրության տակ վերցնելու ու շահագործելու ծրագրից։ 1923 թ. հանդես է գալիս ամերիկյան մեկ ուրիշ՝ «Սինկլեր» նավթային ընկերությունը, որը գտնվում էր «Ստանդարտ օյլ» ընկերության հետ խիստ մրցման մեջ։ Վերջինիս նույնպես չի հաջողվում կենսագործել իր պլանները Իրանի հյուսիսային նավթահանքերի շահագործման վերաբերյալ։

Համաշխարհային երկրորդ պատերազմի նախօրյակին, երբ իմպերիալիստական լագերում խմբավորվում և վերախմբավորվում էին մոնոպոլիստական գիշատիչների ուժերը, ամերիկյան նավթային մագնատները, հաշվի առնելով Մերձավոր և Միջին Արևելքի նավթի կարևորագույն նշանակությունը, նորից հանդես են գալիս ու Իրանի կառավարության հետ բանակցություններ սկսում երկրի հյուսիսային նավթահանքերը, որպես կոնցեսիա իրենց հանձնելու մասին։ Այս բանակցությունների հետևանքով 1937 թ. Իրանի կառավարության և ամերիկյան «Դելավար» նավթային կոնսորցիումի միջև պայմանագիր է կնքվում, որով Կասպից ծովի արևելյան ափից մինչև Աղվանիստանի սահմանը հանձնվում է «Դելավար» ընկերությանը։ Վերոհիշյալ նավթային ընկերությունը ամեն կերպ աշխատում էր իր ձեռքը վերցնել ինչպես Աղվանիստանի, այնպես էլ Բելուջիստանի նավթահանքերը, ապա Իրանի հյուսիսից մինչև Պարսից ծոց կառուցել նավթամուղ խողովակ։

Ամերիկյան իմպերիալիստների այս միջոցառումները խիստ անհանգստություն են պատճառում անգլիական նավթային մագնատներին, որոնք աշխատում են եթե ոչ բոլորովին չեղոքացնել, գոնե թույլ չտալ, որպեսզի ամերիկյան նավթային ընկերությունները տեր ու տնօրեն դառնան Մերձավոր և Մի-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, էջ 332, IV հրատ.։

ջին Արևելքում։ 1939 թ. անգլո-հոլանդական «Ռոյալ-դատչ շյել» տրեստը հոլանդական ֆիրմայի ցուցանակի տակ, իրանական կառավարության հետ պայմանագիր է կնքում, ըստ որի այդ ֆիրմային է հանձնվում Իրանի հյուսիսային մասի նավթի, ինչպես և պղնձի, երկաթի և այլ օգտակար հանածոների հետախուզությունը, հանույթը և շահագործումը։

Սակայն, ինչպես առաջ, այնպես էլ հետագայում կնքված այդ պայմանագրերից և ոչ մեկը չի կենսագործվում, որովհետև իրանական կառավարությունը հարկադրված է լինում հաշվի առնել պրոգրեսիվ հասարակայնության և մասսաների բողոքը երկրի բնական հարստությունները ամերիկյան էքսպանսիոնիստական կապիտալին տրամադրելու դեմ։

Այսպիսով, ամերիկյան գաղութարարներին չի հաջողվում Իրանի էկոնոմիկայի վրա պահել իրենց ազդեցությունը։ Գերմանական իմպերիալիզմը որպես անգլո-ամերիկյան մոնոպոլիստների մրցակից, նորից հանդես է գալիս և աստիճանաբար իր ազդեցությունը տարածում Մերձավոր Արևելքի երկրների վրա։ 1925—1926 թթ. սկսում է այդ ազդեցության ուժեղացումը Իրանի էկոնոմիկայի վրա։ 1927 թ. բժ. Միլսպոն և մյուս ամերիկյան «խորհրդատուները», որոնք իրենց մի քանի տարվա գործունեության ընթացքում պպալիորեն ուժեղացրել էին ամերիկյան իմպերիալիզմի քաղաքական ազդեցությունը Իրանի վրա, չեզոքացվում և հեռացվում են աշխատանքից, նրանց տեղը աստիճանաբար գրավում են գերմանական մոնոպոլիզմի ներկայացուցիչները բանկային «գործիչ» Լինդենբլատի գլխավորությամբ։ Այսպիսով, գերմանացիներին հաջողվում է, ժամանակավորապես դրավել ամերիկացիների տեղը Իրանում։

Համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին ամերիկյան իմպերիալիստները սկսում են վերականգնել Իրանում կորցրած իրենց դիրքերը։

Ամերիկյան էքսպանսիոնիստները՝ հաշվի առնելով համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքում Բրիտանական կայսրության թուլացումը, ինչպես և ազգային-ազատագրական շարժումների ծավալումը գաղութային, կիսագաղութային և ենթակա երկրներում, համաձայնության գալով բրիտանական իմպերիալիզմի հետ՝ որպես «կրտսեր գործակցի», սկսում են ավելի որոշակիորեն տարածել իրենց ազդեցությունը՝ ի թիվս մյուս գաղութային և ենթակա երկրների նաև Իրանում։

1943 թ. Իրանի տնտեսական և քաղաքական հորիզոնի վրա նորից երևում է Միլսպոն իր բազմաթիվ միսիաներով և «խորհրդատուներով»։ Այսպես, օրինակ՝ ռազմական մի քանի տասնյակ «խորհրդատուների» գլխավորում էր գեներալ-մայոր Ռիդլին, ոստիկանության աշխատանքները ղեկավարում էր ռազմագետ Տիմերմանը։ Պրոֆեսոր Ուինդլորը մի շարք մասնագետներով ղեկավարում էր ոռոգումը, դնդապետ Նյուպորտը՝ առողջապահական աշխատանքը, Տերիդանը՝ պարենային մինիստրության աշխատանքը, Տեյլորը՝ ավիացիան։ Ամերիկյան հետախուզության ոչ անհայտ խուզարկու «մասնագետ», այն ժամանակ դնդապետ, իսկ այժմ գեներալ Շվացկորպֆ Նորմանին հանձնարարվեց գլխավորել իրանական ժանդարմերիան, որը ծրագրված պայքար ծավալեց ընդդեմ երկրի ազգային-դեմոկրատական, պրոգրեսիվ շարժման։

Իրանը ողողվեց ԱՄՆ-ի էքսպանսիոնիստների բազմաթիվ և բազմատեսակ միսիաներով, նրանց «խորհրդատուներով», ժուռնալիստներով, ռազմական և և բպպարական «գործիչներով», ամերիկյան հետախուզության գործակալնե-

բով, որոնք իրենց հսկողության տակ առան երկրի էկոնոմիկան, ռազմա-քաղաքական և տնտեսական ամբողջ կյանքը։

Դեռևս պատերազմի տարիներին, Ամերիկայից Սովետական Միություն փոխադրվող ապրանքներին «օժանդակելու» պատրվակով ամերիկյան էքսպանսիոնիստները, Իրանի այն ժամանակվա կառավարության համաձայնությամբ, սկսեցին զբաղվել երկրի նավահանգիստների, երկաթուղիների, խճուղիների վերակառուցմամբ։

Այսպիսով, ամերիկյան իմպերիալիզմը դարձավ երկրի տերն ու տնօրենը, Իրանը համարելով իր գաղութը։ Այդ մասին գրած իր նոր գրքում ցինիկաբար Միլսպոն հայտարարում է, որ «Անհրաժեշտ է միջամտել Պարսկաստանի ներքին գործերին... Պարսկաստանը կարծես թե պատվերով է ստեղծված ամերիկյան կյանքի լայն սկզբունքների և ավելի քան ստեղծագործական հավելումների համար»[1]։

Ամերիկյան իմպերիալիզմի ներկայացուցիչները, Միլսպոյի ղեկավարությամբ, իրենց գործունեությամբ ամբողջովին քայքայեցին Իրանի էկոնոմիկան և ֆինանսները։ Վերջին տասնամյակների ընթացքում ստեղծված առանց այն էլ թույլ արդյունաբերությունը հասցվեց կատաստրոֆիկ վիճակի. Այդ «խորհրդատուները» Իրանի ժողովրդին նստեցին չափազանց թանգ։ Ինքը Միլսպոն Իրանի կառավարությունից ստանում էր տարին 18 հազար դոլլար աշխատավարձ, իսկ եթե հաշվի առնենք, որ Իրանում գործող ամերիկյան այդ «օգնության» միսիաների, նրանց «խորհրդատուների» և այլ ղեկավարների քանակը վիթխարի չափով մեծ էր, ապա պարզ կլինի, թե ինչ է նշանակում Իրանի նման տնտեսապես թույլ մի երկրի համար՝ նման հսկայական ծախսերի կատարումը։

Մյուս կողմից՝ ամերիկյան իմպերիալիստների ներկայացուցիչները, գործելով իրանական ռեակցիոն պետական շրջանների հետ, բոլոր լեգալ և անլեգալ միջոցներով աշխատում էին խանգարել Իրանի և ՍՍՌՄ-ի բարի-դրացիական հարաբերությունների ուժեղացմանն ու ամրապնդմանը։ Միլսպոյի պահանջով նորից կյանքի կոչվեց Հյուսիսային Իրանի նավթահանքերը ամերիկյան «Սինկլեր» ընկերությանը որպես կոնցեսիա հանձնելու պլանը, որին ձրգտում էր Ամերիկան դեռ 1923 թվականից։

Ամերիկյան «խորհրդատուների» գործունեությունը չէր կարող Իրանի դեմոկրատական-պրոգրեսիվ կազմակերպությունների և մամուլի ուշադրությունը չգրավել ու չառաջացնել բուռն բողոք, զզվանք և ատելություն գեպի ամերիկյան գաղութարարները։ Նրանք հայտարարում էին, որ ինչպես Միլսպոն, այնպես էլ մյուս միսիաների ղեկավարները գիտակցաբար քայքայում են Իրանի էկոնոմիկան, հող պատրաստում Իրանը ԱՄՆ-ի գաղութ դարձնելու համար։ 1944 թ. «Դագ» և այլ թերթեր, մեջլիսում մի շարք պրոգրեսիվ դելեգատներ հայտարարեցին այն մասին, որ Միլսպոն նախօրոք մշակված պլանով քայքայում է երկրի տնտեսական կյանքը նրա համար, որպեսզի Իրանը հարկադրված լինի դիմելու ամերիկյան մոնոպոլիստների օգնությանը։ Բնորոշ է դեպուտատ Կոմրաշխի 1944 թ. ելույթը, որով նա մեջլիսի նիստում հայտարարեց՝ «ԱՄՆ-ի կապիտալիստների կողմից հանձնարարված է Միլսպոյին՝ քայքայել Իրանի արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և երկրի ամբողջ

[1] Millspaugh A., Americans in Persian, p. 47, Washington, 1947 y.

էկոնոմիկան, որպեսզի պատերազմից հետո այդ կապիտալիստների համար ապահովեն ձեռնտու և հարմար շուկա»։

Հուզմունքն ու վրդովմունքը Իրանի աշխատավորության լայն զանգվածների շրջանում գնալով ավելի ծավալվում էր և վտանգ ստեղծում «օգնության» եկած ամերիկացիների համար։ Մասսաների ռևոլուցիոն ցասումը «հանգրստացնելու» նպատակով Իրանի մեջլիսը հարկադրված է լինում 1944 թ. ընդունելու հատուկ որոշում՝ Միլսպոյին աշխատանքից հեռացնելու մասին։

Չնայած Միլսպոն հեռացվեց, բայց ամերիկյան մյուս «խորհրդատուները» և «օգնության» եկած մասնագետները շարունակեցին մնալ և գործել Իրանում, կատարելով ամերիկյան մոնոպոլիստների հանձնարարությունները։

Ամերիկյան իմպերիալիզմի ներկայացուցիչների Իրանին ցույց տրված «օգնության» ձևերից մեկն էլ այսպես կոչված «7-ամյա պլանի» մշակումն էր։

Ի՞նչ էր ներկայացնում իրենից այդ «պլանը»։

Այդ տխրահռչակ «պլանը» ըստ էության հանդիսանում էր ԱՄՆ-ի մոնոպոլիստական կապիտալի շահերի ապահովումը Իրանում, երկրի ենթարկումը ԱՄՆ-ին։

Ամերիկյան իմպերիալիստների՝ Իրանում տեր ու տնօրեն դառնալու հետևանքով, երկրի աշխատավոր գյուղացիության և երիտասարդ բանվոր դասակարգի համար ստեղծվեցին կյանքի դաժանագույն պայմաններ։ Իրանը «աղքատության և սովի երկիր է», հայտարարեց Վարշավայի խաղաղության կոնգրեսում իրանական ժողովրդի ներկայացուցիչը։

Ամերիկյան էքսպանսիոնիստները Իրանի ներքին շուկան սկսեցին ողողել ամեն տեսակի ապրանքներով։ Բարենպաստ պայմաններով ներմուծված ամերիկյան ապրանքները մրցելով հայրենական ապրանքների հետ, սկսեցին դուրս մղել նրանց հարազատ շուկայից։

Այսպես, օրինակ՝ ԱՄՆ-ից Իրան ներմուծվող ապրանքները 1937—1938 թ 83 միլն. ռեալից (մեկ ռեալը=16 կոպեկի) աճեց և 1949—1950 թ. կազմեց շուրջ 2858 միլն. ռեալ, իսկ Իրանի իմպորտի մեջ ԱՄՆ-ի տեսակարար կշիռը համապատասխանորեն 8,6 տոկոսից հասավ 42,3 տոկոսի։ 1948—1949 և 1949—1950 ընթացիկ տարիներին ամերիկյան ապրանքների ներմուծումը Իրան՝ գերազանցեց Միացյալ Նահանգները ներմուծվող իրանական ապրանքներին 3.689 միլն. ռեալով, կամ 9,8 անգամ[1]։ Այդ բոլորի հետևանքով՝ վերջին տարիների ընթացքում Իրանի գործարանային արդյունաբերությունը հասցվեց ճգնաժամային վիճակի։ Չկարողանալով դիմանալ ամերիկյան ապրանքների մրցմանը, այդ գործարաններից շատերը դադարեցին գործելուց։ Իրանի արդյունաբերության կատաստրոֆիկ դրության մեջ գտնվելը հաստատում են հենց իրանական թերթերը։ Թեհրանի «Կավյան» ժուռնալը 1950 թ. փետրվար ամսի համարում գրեց՝ «Իրանում արդյունաբերական ձեռնարկների փակվելը շարունակվում է։ Իսպահանի մի շարք ձեռնարկություններում աշխատանքը դադարելուց հետո օրերս փակվեց ևս մեկ տեքստիլ ֆաբրիկա։ Իսպահանում այժմ կա ավելի քան 10 հազար գործազուրկ»։

Մեկ ուրիշ թերթ՝ «Սեթարե»-ն նշում էր, որ «Ահվազի տեքստիլ ֆաբրիկայի բաժնետերերը դիմել են կառավարությանը և հայտարարել, որ «Արտասահմանից, հատկապես Ամերիկայից, հսկայական քանակությամբ օտարերկրյա

[1] Вопросы экономики № 9, стр. 72, 1951 г.

տեքստիլ ապրանքների և հին մաշված հագուստեղենի ներմուծման հետևանքով, Խուզիստանի տեղական ֆաբրիկաները մեկը մյուսի հետևից փակվում են»։ Ահվազի տեքստիլ ֆաբրիկան միանգամայն քայքայվել է։ Նրա հումքը կբավականացնի միայն մեկ շաբաթ, որից հետո ֆաբրիկան փակվելու է»։

«Քեյհան» թերթը գրում էր «Ռեշտ քաղաքում մի քանի օրից հետո կփակվի պարկերի ֆաբրիկան, 550 բանվորներ գործազուրկ են մնալու»։

Իրանի արտաքին առևտրի բալանսը իրենից ներկայացնում է խիստ ողորմելի պատկեր։ Այն խիստ դեֆիցիտային է։ Այսպես, օրինակ՝ եթե իմպորտը 1937—1938 թ. կազմում էր 970 միլիոն ռեալ, 1949—1950 թ. այն աճեց և հասավ մինչև 6.786 միլիոն ռեալի, իսկ էքսպորտը այդ նույն ժամանակամիջոցում աճեց 671 միլիոն ռեալից մինչև 1721 միլիոն ռեալի։ Այսպիսով, 1949—1950 թ. դեֆիցիտը կազմում էր 5065 միլիոն ռեալ 1937—1938 թ. 299 միլիոն ռեալի դիմաց։ 1949—1950 թ. առևտրական բալանսի պասիվ սալդոն համարյա երեք անգամ գերազանցում էր ամբողջ էքսպորտին։ Իրանի արտաքին առևտրի բալանսի այս դրությունը շարունակվում է և այժմ։

Իրանի արտաքին առևտրի դեֆիցիտային դրությունը կարելի է բացատրել միայն որպես հետևանք ամերիկյան և անգլիական իմպերիալիզմի էքսպանսիայի։ Վերևում մատնանշված արտաքին առևտրի 5065 միլիոն ռեալ դեֆիցիտից ԱՄՆ-ին և Անգլիային բաժին է ընկնում 3945 միլիոն ռեալ[2]։

Այս դրությունը չէր կարող չանդրադառնալ երկրի ֆինանսների դրության վրա։ 1950 թ. բյուջետային դեֆիցիտը աճեց և հասավ եկամտային մասի համարյա 50 տոկոսին։ Որպեսզի հնարավոր լինի ծածկել աճող դեֆիցիտը, կառավարությունը հարկադրված եղավ ավելացնել ուղղակի և անուղղակի հարկերը։ Այսպես, օրինակ, եթե 1939—40 թ. բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնում էր 13,1 ռեալ ուղղակի և 79,2 ռեալ անուղղակի հարկ, 1949—50 թ. բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնում էր 60 ռեալ ուղղակի և 269,1 ռեալ անուղղակի հարկ[3]։

Այսպիսով, Իրանում ԱՄՆ-ի վարած քաղաքականության հետևանքով երկրի ամբողջ էկոնոմիկան ընդգրկվեց տնտեսական սուր ճգնաժամի մեջ, որը առաջին հերթին յուր հարվածը հասցնում է բազմաշարչար աշխատավորությանը։ Ճգնաժամը այն աստիճան վատթարագույն պայմանների մեջ գրեց երկրի բնակչությանը, որ մի շարք քաղաքներում՝ Թեհրանում, Ռեշտում, Մեհշեդում, Թավրիզում և այլն, աշխատավորությունը 1949—50 թթ. կազմակերպեց ցույցեր, դեմոնստրացիաներ, ընդդեմ Իրանում ամերիկյան իմպերիալիստների վարած քաղաքականության, ընդդեմ ռեակցիոն կառավարիչների։ Ստեղծված կատաստրոֆիկ վիճակի մասին հարկադրված եղավ խոստովանել անգամ Իրանի այդ ժամանակվա պրեմյեր-մինիստր Սայեդը, որը 1949 թ. օգոստոս ամսի պրեսկոնֆերանսում հայտարարեց, «200 հազար տոննա հացահատիկ Իրանի համար ավելի արժեքավոր է, քան թե 200 հազար ամերիկյան թնդանոթ»[4]։ Իրանի կառավարող շրջանները իրենց փրկություն գտնում էին ամերիկյան էքսպանսիոնիստների ռազմական և ֆինանսական «օգնության» մեջ։

---

[1] Вопросы экономики, № 9, стр. 74, 1951 г.
[2] Там же.
[3] Там же.
[4] Новое время, № 34, стр. 13, 1949 г.

Այս նպատակով Իրանի շահ Մահմեդ Ռեզա Փեհլեվին 1949 թ. նոյեմբերի 16-ին ԱՄՆ-ի պրեզիդենտ Տրումենի հրավերով, նրա անձնական ինքնաթիռով, որը կրում է տարօրինակ „Independence" (անկախություն) անունը, թռավ Ամերիկա։

Ուշագրավն այն է, որ Իրանի շահի ԱՄՆ մեկնելուց դեռևս երկու ամիս առաջ, Կահիրեում հրատարակվող եգիպտական «Ալ-Միսրի» թերթը, ըստ յուր Վաշինգտոնի թղթակցի հաղորդման, գրեց «...որ ներկայումս ամերիկյան ռազմական մասնագետները պլաններ են մշակում Մերձավոր Արևելքի համար։ Մերձավոր Արևելքի համար մշակվող ամերիկյան ագրեսիվ պլաններում, որոնք ուղղված են ՍՍՌՄ-ի դեմ, գլխավոր դերը հատկացվում է Եգիպտոսին, Իրաքին և Լիբանանին։

Այդ նույն կապակցությամբ ԱՄՆ-ի պաշտպանության խորհուրդը մշակում է Մերձավոր Արևելքի երկրների, մասնավորապես Իրաքին, Սաուդյան Արաբիային, Եգիպտոսին, Լիբանանին, Իրանին «օգնություն» ցույց տալու պլաններ և նախագծեր։

Ամերիկյան այդ նախագծերի համաձայն, այն երկրներում, որոնք ստանալու են ամերիկյան այսպես կոչված «օգնություն», ստեղծվելու են անգլո-ամերիկյան ռազմա-օդային և ռազմա-ծովային բազաներ»[1]։

Կասկածից դուրս է, որ Իրանի շահի Ամերիկա թռչելը պայմանավորված էր ԱՄՆ-ի ռազմական իշխանությունների կողմից վաղօրոք մշակված պլանով։

Ժամանելով Ամերիկա, Իրանի շահը ամերիկյան մամուլի միջոցով հայտարարեց, որ նրա ԱՄՆ մեկնելը ունի բացարձակապես «բարի ցանկությունների» նպատակ։ Հետագայում «Նյու-Յորք հերալդ տրիբուն» թերթը անդրադառնալով ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի այն հայտարարությանը, թե Իրանի շահի Ամերիկա մեկնելը ունի «բարի ցանկություններ», ցինիկ կերպով մատնանշեց, որ՝ «Ներկա ժամանակներում այդ նշանակում է, որ նա ձգտում է ԱՄՆ-ից ստանալու երկու բան՝ սպառազինում և դրամ»[2]։

Վերջացնելով իր «բարի ցանկությունների միսիան», Իրանի շահը պրես-կոնֆերանսում հայտարարեց, որ իր և Տրումենի միջև եղած բանակցությունների ժամանակ, քննարկվել է ԱՄՆ-ի կողմից Իրանին տրվելիք ռազմական «օգնության» հարցը, որպեսզի կասեցվի «կոմունիզմի ներթափանցումը Միջին Արևելք»[3]։

ԱՄՆ-ի կողմից Իրանին տրվելիք ռազմական «օգնությունը» պայմանավորված էր նաև այն համաձայնությամբ, որ կնքվել էր ԱՄՆ-ի և Իրանի միջև դեռևս 1947 թ. հոկտեմբերի 6-ին։

Ամերիկյան էքսպանսիոնիստների նման գործունեությունը Իրանում չէր կարող չառաջացնել անգլիական իմպերիալիստների շրջաններում լուրջ հուզմունք և տագնապ։ Իրանն իր աշխարհագրական դիրքով և բնական հարստություններով, Մերձավոր և Միջին Արևելքի անգլիական գաղութների, նրա ազդեցության սֆերայի շրջաններում խաղացել է և շարունակում է խաղալ ոչ սակավ նշանավոր դեր։ Դեռ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին անգլիական դիվանագիտությունը մի շարք փորձեր կատարեց՝ խան-

[1] „Правда", 15 сентября, 1949 г.
[2] Там же. 28 ноября, 1949 г.
[3] Там же.

գարել ամերիկյան էքսպանսիոնիստական կապիտալի ներթափանցմանը ինչպես Իրան, այնպես էլ արաբական երկրները։

Սակայն, ինչպես մատնանշեցինք վերևում, մի կողմից անգլիական իմպերիալիզմի թուլանալը, մյուս կողմից գաղութային, կիսագաղութային և ենթակա երկրներում ազգային-ազատագրական պայքարի հախուռն վերելքն ու զարգացումը, հարկադրեցին Անգլիային՝ ամերիկյան մոնոպոլիստական իմպերիալիզմին հանձնելու մի դիրքը մյուսի ետևից։ Օրինակ՝ արաբական երկրներում նա զիջեց ներքին շուկաները, բնական հարստությունների օգտագործումը, ապրանքների իմպորտը, կապիտալ ներդրումները և այլն, Իրանում՝ բրիտանական իմպերիալիզմի սֆերայի ազդեցության տարածման հինավուրց այդ երկրում, Անգլիան հարկադրված եղավ իր տեղը զիջելու ԱՄՆ-ին, հաշտվելով «կրտսեր գործակցի» դերով. անգամ իր նավթային մոնոպոլիայից ամերիկյան նավթային տրեստներին տալով նավթի հանույթի 20 տոկոսը, որը հետագայում հասցվեց մինչև 40 տոկոսի։ Իսկ ներկայումս ամերիկյան էքսպանսիոնիստները աշխատում են դիվանագիտական որոգայթների միջոցով այն ամբողջապես վերցնել իրենց ձեռքը։

1932 թ. ամերիկյան նավթային մոնոպոլիստները ձեռք են բերել և շարունակում են իրենց ձեռքում պահել Պարսից ծոցի Բահիրյան կղզիների նավթահանքերը, որոնք անցյալում պատկանում էին Իրանին, իսկ 19-րդ դարից անցել էին անգլիացիների պրոտեկտորատի տակ։ Ամերիկյան դիվանագիտությունը ներկայումս ձգտում է խարդախության և որոգայթների միջոցով այդ կղզիները վերջնականապես ենթարկելու ԱՄՆ-ին։

Որպեսզի անգլիական մոնոպոլիստներին ամբողջապես Իրանից չեզոքացնեն, երկիրը տնտեսապես ու քաղաքականապես ենթարկեն իրենց և Մերձավոր ու Միջին Արևելքում այն դարձնեն ռազմա-ստրատեգիական և հումքի բազա, ամերիկյան իմպերիալիստները Իրանին պարտադրում են ստրկացուցիչ փոխառություններ, վարկեր և, այսպես կոչված, «օգնություն», ըստ «Տրումենի ծրագրի չորրորդ կետի»։ 1950 թվականի մայիսի 23-ի ԱՄՆ-ի և Իրանի միջև կնքված համաձայնագիրը՝ վերջինիս «օգնության» կարգով վարկեր տրամադրելու մասին, հանդիսանում է անցյալի կնքած համաձայնագրերի լրացումը, որով երկիրն ամբողջապես դրվում է ամերիկյան իմպերիալիստների ազդեցության տակ։ Պայմանագրում նախատեսված է, որ Իրանին տրված «օգնության» միջոցների ծախսումը պետք է վերահսկողության ենթարկել Իրանա-ամերիկյան հանձնաժողովի կողմից (ըստ էության ԱՄՆ-ի գործակալների կողմից)։ Այսպիսի պայմանագրերն ու համաձայնագրերը առաջացրել են ոչ միայն պրոգրեսիվ կազմակերպությունների, աշխատավորության լայն զանգվածների, այլև Իրանի կառավարող որոշ շրջանների դժգոհությունն ու բողոքը։ Ամերիկյան փոխառությունների և վարկերի մարումը, որպես ծանր լուծ ընկած է իրանական աշխատավորության վզին։

Ամերիկյան «օգնությունը» գործնականում ունեցավ այն հետևանքը, որ իրանական ժողովուրդը, ընկնելով ամերիկա-անգլիական մոնոպոլիստական կապիտալի քայքայիչ հարվածների տակ, այսօր բարձրացրել է իր ցասումի և բողոքի ձայնը։ Նա ցանկանում է լինել ազատ և անկախ, պայքարել խաղաղության և դեմոկրատիայի համար։

Իրանական ժողովուրդը դեմ է ամերիկա-անգլիական իմպերիալիստների ռազմատենչ քաղաքականությանը, նա գարշանքով է վերաբերվում այն բոլոր

միջոցառումներին, որը նրանք անց են կացնում Իրանում և այլ գաղութային երկրներում։ Նա բացարձակորեն հայտարարում է, որ ինչն արյուն չի թափի ամերիկյան իմպերիալիզմի համար։

Իրանական «Իրան—և մա» շաբաթաթերթը, արտահայտելով իրանական ժողովրդի տրամադրությունները, ԱՄՆ-ի դեսպան Գրեյդիի 1950 թ. Թեհրան ժամանելու առթիվ և Գրեյդիի կողմից Ամերիկայից Իրանի ժողովրդի համար բերած «նվերների» մասին գրեց՝ «Այդ «նվերները» կապանքներ և շղթաներ են, ձերբակալությունների և աքսորների հրամաններ. ինչպես և կարգադրություններ՝ այն մարդկանց մասսայական բնաջնջման մասին, որոնց անունները մտցվել են ու մտցվում են «կոմունիստներ» կոչվող հատուկ ցուցակի մեջ»։

Ապա դիմելով դեսպանին, թերթը հայտարարում է՝ «Ենթադրենք պարոն դեսպանի բոլոր մտադրությունները իրականացան, ենթադրենք ձերբակալեցին և բանտ նստեցրին, սպանեցին, այրեցին, կամ որևէ այլ միջոցով ոչնչացրին այն բոլոր մարդկանց, ովքեր կբողոքեն, իսկ հետո ի՞նչ պետք է անեն։ Մի՞թե դուք կարծում եք, որ իրանական ժողովուրդը կհամաձայնվի մասնակցել պատերազմի և իր արյունը կզոհաբերի ամերիկյան իմպերիալիզմի համար։ Այդ չի լինի...»[1]։

Միջազգային պրոլետարիատի հանճարեղ առաջնորդներ Լենինն ու Ստալինը սովորեցնում են, որ մոնոպոլիստական կապիտալի դարաշրջանում «...մոնոպոլիաներն աճելով ազատ կոնկուրենցիայից՝ չեն վերացնում այդ կոնկուրենցիան, այլ գոյություն ունեն նրանից վեր ու նրա հետ կողք կողքի՝ սրանով ստեղծելով մի շարք առանձնապես սուր և խիստ հակասություններ, բախումներ, ընդհարումներ»[2]։ Այդ մրցավազքի նշանաբանի տակ առանձնապես Մերձավոր և Միջին Արևելքում աճում և գնալով սուր բնույթ են ստանում ամերիկա-անգլիական հակասությունները, հատկապես իրանական նավթի հարցի վերաբերյալ։

Դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, ԱՄՆ-ը և Անգլիան միմյանց հետ պայմանագիր կնքեցին և համաձայնության եկան, որ՝ Մերձավոր Արևելքի և Միջերկրական ծովի արևելյան մասի երկրների ռազմական և քաղաքական դրության «գլխավոր պատասխանատվությունը» դրվում է Անգլիայի վրա, իսկ ԱՄՆ-ին թույլատրվում է հանդես գալ այդ երկրներում միայն «տնտեսական» և հատկապես նավթի հարցերում։ Դրա փոխարեն Անգլիան ընդունեց ԱՄՆ-ի «գլխավոր պատասխանատվության» դերը Հեռավոր Արևելքում, հատկապես Չինաստանի և Ճապոնիայի ռազմական և քաղաքական դրության վերաբերյալ, իրեն իրավունք վերապահելով հանդես գալու այդ երկրներում «տնտեսական շահագրգռվածության» հարցերով։

Սակայն հերոս Չին ժողովրդի պատմական հաղթանակը հողմացրիվ արեց ամերիկա-անգլիական իմպերիալիստների սֆերաների բաժանման այդ գործարքը։ Կրելով խայտառակ պարտություն, Միացյալ Նահանգները սկսեցին ավելի հաճախ խառնվել Անգլիայի, Մերձավոր Արևելքի և Միջերկրական ծովի ավազանի «ռազմական-քաղաքական գլխավոր պատասխանատվության սֆերայի» գործերին, և 1951 թվականի սկզբներից ԱՄՆ-ը կոնկրետ կերպով առաջադրեց փոխել Անգլիայի «տրադիցիոն գերակշռող դերը» Ամերիկայի «ղեկա-

[1] «Սովետական Հայաստան», հունիսի 9, 1950 թ.։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 22-րդ, էջ 353, 4-րդ հրատ.։

վարությամբ», պատճառաբանելով, որ «պաշտպանության ամրապնդման անհրաժեշտության» տեսակետից միջերկրածովյան ավազանը պետք է մտնի Հյուսիսային ագրեսիվ պակտի մեջ։ Միաժամանակ ամերիկյան նավթային մագնատները, պետական դեպարտամենտի լռելյայն համաձայնությամբ անցկացրին բարդ մանյովր, որով նախատեսվում էր ձեռք բերել Իրանի անգլիական չափազանց հարուստ նավթային կոնցեսիան։

Ամերիկյան էքսպանսիոնիստների այդ քաղաքականությունը իր արտահայտությունն է գտնում ամերիկյան մամուլի էջերում, որը 1951 թ. սկզբներից սկսել է բաց ու որոշ կամպանիա մղել Անգլիայի դեմ։

Այսպես, օրինակ՝ «Յունայտեդ ստեյտս Նյուս էնդ Ուորլդ ռիպորտ» ժուռնալը իր 1951 թ. մարտ ամսի համարում գրեց՝ «Ամբողջ Միջերկրական ծովը, գումարած Մերձավոր Արևելքը, որը դարձել է վտանգավոր շրջան, ներկայումս գրավում է ամերիկյան ռազմական ղեկավարների և դիվանագետների ուշադրությունը... Քարտի վրա են դրված Մերձավոր Արևելքի ամենահարուստ նավթի հանքերը... Ամբողջ միջերկրածովյան ավազանը մեկ ծայրից մինչև մյուսը, ընդգրկված են վտանգավոր ընդհարումների և բախումների մեջ»[1]։

Ամերիկյան մոնոպոլիստները ձգտում են «ապացուցել», որ ինչպես Իրանում, Մերձավոր Արևելքի այլ երկրներում, այնպես էլ միջերկրածովյան ավազանի երկրներում, արևմտյան տերությունների համար ստեղծված «վտանգավոր» սիտուացիայի գլխավոր պատճառը հանդիսանում է անգլիական իմպերիալիզմը։

Սակայն, անգլիական իմպերիալիստները պնդում են Միջերկրական ծովում և Մերձավոր Արևելքում իրենց գերակշռող դիրքի վրա։ «Յունայտեդ պրեսս» գործակալության թղթակիցը 1951 թ. մայիս ամսի 14-ին Լոնդոնից հաղորդեց, որ «Անգլիան պնդում է Մերձավոր Արևելքում գերակշռող իր տոադիցիոն դերի պահպանման վրա և, հետևաբար, պահանջում է վճռական խոսք ամեն տեսակ համաձայնություններում՝ Միջերկրական ծովի արևելյան մասի պաշտպանության հարցում։ ...Անգլիական կառավարող շրջանները ընդգծում են, որ ինչպես Մերձավոր Արևելքը, այնպես էլ Միջին Արևելքը գտնվում են ատլանտյան պակտի զոնաներից դուրս և, հետևաբար, ատլանտյան միության ռազմական կազմակերպման իրավասության մեջ չի մտնում նրա պաշտպանության խնդիրը»[2]։

Իրանական ժողովուրդը երկար տարիների ընթացքում պայքար է մղում ամերիկյան և անգլիական գաղութարարների դեմ, որոնք շանտաժի ու կաշառքի միջոցով իրենց ձեռքն են վերցրել երկրի հարստությունները։

Ժողովրդական մասսաների ճնշման տակ, իրանական մեջլիսը 1951 թ. ապրիլի 28-ին օրենք ընդունեց «Անգլո-իրանական նավթային ընկերությունը ազգայնացնելու մասին»։ Եվ ինչպես հայտարարեց 1951 թ. մայիսի 2-ի մեջլիսի նիստում Իրանի նոր պրեմյեր-մինիստր Մոսադդիկը՝ «Այն պայմանագիրը, որը 1933 թվականին ուժի միջոցով կնքվել էր «Անգլո-իրանական նավթային ընկերության» հետ, Իրանը պարտավոր չէ կատարելու»։

Իրանի նավթային արդյունաբերությունը ազգայնացնելու և նրա փոխարեն Իրանի ազգային նավթային ընկերություն ստեղծելու վերաբերյալ մեջլիսի

[1] Новое время, № 22, стр. 6, 1951 г.
[2] Там же, стр. 7.
[3] „Правда" 3 мая 1951 г.

որոշումից հետո, Իրանում տեղի ունեցած դեպքերի զարգացումը, ինչպես և ամերիկյան ու անգլիական մամուլի հաղորդումները ցույց են տալիս, որ Անգլիան վճռել է ձեռք առնել բոլոր միջոցները, որպեսզի հարկադրի իրանական կառավարությանը՝ վերացնելու կամ փոխելու այդ օրենքը։

Անգլիական «Թայմս» թերթի դիվանագիտական տեսաբանը կաշվից դուրս էր գալիս հիմնավորելու Անգլիայի և ԱՄՆ-ի «իրավունքը»՝ միջամտելու Իրանի ներքին գործերին։

«Տվյալ հարցում անգլիական կառավարությունը շահագրգռված է անմիջականորեն, գրում է տեսաբանը, քանի որ նա տերն է «Անգլո-իրանական նավթային ընկերության» ակցիաների շուրջ 50 տոկոսին. իսկ ԱՄՆ-ի կառավարությունը հաշվի առնելով արևմտյան աշխարհի էկոնոմիկայի համար նավթի մատակարարումը, ինչպես և ստրատեգիական նպատակները, թեպետ ոչ անմիջականորեն, բայց այնուամենայնիվ ունի ոչ սակավ շահագրգռվածություն։ Այդ պատճառով, ինչպես մատնանշում են Լոնդոնում, միանգամայն բնական է, որ երկու կառավարությունները կխորհրդակցեն այն մասին, թե ինչ միջոցներով կարելի է ապահովել նավթային արդյունաբերության կառավարումը «Անգլո-իրանական նավթային ընկերության» օգնության միջոցով»[1]։

Այսպիսի ոգով սկսեցին գրել նաև անգլիական մի շարք այլ թերթեր. ինչպես պահպանողական «Էյորկիշեր պոստ»-ը և ուրիշները, որոնք ամեն կերպ աշխատում էին ներգործել իրենց ամերիկյան մրցակիցների վրա և նախազգուշացնել, որ եթե նրանք հանդես չգան անգլիական կառավարության հետ միացած ուժերով, Իրանի օրինակը կարող է վարակիչ ազդեցություն ունենալ Մերձավոր Արևելքի մնացած երկրների համար։

Սակայն այս նախազգուշացումները բնավ չհուզեցին ամերիկյան էքսպանսիոնիստներին։ Ընդհակառակը, նրանք իրենց անգլիական կոլեգաների ազդարարումները համարեցին իրենց կողմից Իրանում անցկացվող միջոցառումների հետևանք և սկսեցին է՛լ ավելի պղտորել ջուրը, որպեսզի հնարավոր լինի ազատ ձուկ որսալու։ Այդ գործում մեծ եռանդ գործադրեց ԱՄՆ-ի արտաքին գործերի մինիստրի օգնականը՝ Ջորջ Մակգին, որը անձամբ կապված է նավթային ընկերությունների հետ։ Նա 1951 թ. մարտի վերջին մեկնեց Իրան, մոտիկից ծանոթանալու իրանական նավթային «կոնֆլիկտին» և «արտակարգ» պայմաններին։

Այս իրադարձություններն ակնարկելով ամերիկյան «Նյու-Յորք պոստ» թերթը, 1951 թ. ապրիլ ամսին գրում էր. «...դժվար է պատկերացնել մի քայլ, որը անգլիացիներին ավելի շուտ համոզեր, որ ամերիկյան նավթային ընկերություններն են գրավելու Անգլո-իրանական նավթային ընկերության տեղը»[2]։

Ամերիկյան մի այլ ժուռնալ «Նյուս ուիկը» խոսեց ավելի քան պարզ, ցույց տալով որոշակիորեն ամերիկյան նավթային մագնատների հեռանկարային պլանները։ «Ամերիկյան ընկերությունները,— գրում է ժուռնալը,— կազմում են համապատասխան ժամանակին իրանական կառավարությանը ներկայացնելու համաձայնագրերի նախագծեր այն դեպքում, եթե իրանական կառավարությունը չկարողանա համաձայնության գալ անգլիացիների հետ»[3]։

Ամերիկյան մամուլի նման հաղորդումները անգլիական պետական շրջ-

[1] Новое время, № 27, стр. 12, 1951 г.
[2] Там же.
[3] Там же.

ջաններում չէին կարող չառաջացնել խիստ ջղաձգություն և տագնապ։ Անգլիական իմպերիալիստները չէին ընդունում ամերիկյան իրենց «եղբայրակիցների» միջոցառումները իրենց «սֆերայի» ազդեցության երկրներում։

Ահա այս պայմաններում ԱՄՆ-ի և Անգլիայի միջև 1951 թ. ապրիլին սկսվեցին բանակցություններ իրանական նավթի հարցի վերաբերյալ։ Պետք է մատնանշել, որ այդ բանակցությունների ընթացքում ԱՄՆ-ը ամեն կերպ աշխատում էր օգտագործել Անգլիայի համար Իրանում ստեղծված դժվարությունները և իր համար ուղի հարթել դեպի իրանական նավթը։ Ըստ իրանական «Թոլոս» թերթի՝ ԱՄՆ-ի կառավարությունը ամեն կերպ աշխատեց օգտագործել իրանական նավթի հարցը, որպեսզի Անգլիայի վրա ճնշում գործադրի և վերջին հաշվով հարկադրի նրան համաձայնելու՝ Չինաստանին ենթարկել տնտեսական բլոկադայի, որի դեմ Անգլիան տնտեսական նկատառումներով առարկում էր։ Ըստ երևույթին Լոնդոնում գտան, որ իրանական նավթի հարցում Միացյալ Նահանգների կողմից Անգլիային «պաշտպանելու» և «ոգնություն» ցույց տալու գինը խիստ բարձր էր»։

Անգլիան և Միացյալ Նահանգները Վաշինգտոնի 1951 թ. մայիսյան խորհրդակցությունում որոշ չափով կոորդինացիայի ենթարկեցին Մերձավոր և և Հեռավոր Արևելքի իրենց արտաքին քաղաքականության հարցերը։ «Նյու-Յորք պոստ» թերթը գրում էր. «Այս երկու կառավարություններից յուրաքանչյուրի առաջ Ասիայում կանգնած են իրենց սեփական սուր պրոբլեմները։ Մեզ համար Ասիան արտահայտվում է Կորեայով և Չինաստանով. իսկ Անգլիայի համար Ասիան արտահայտվում է Իրանով... Ներկայումս... Միացյալ Նահանգները մտադիր են Իրանում անգլիական գիրքը պաշտպանելու... Անգլիան պաշտպանեց ամերիկյան բանաձևը, որը կոչ է անում ՄԱԿ-ին էմբարգո դնել Չինաստանին վաճառվելիք ռազմական նյութերի վրա»[1]։

Ահա այն գինը, որով անգլիական իմպերիալիստները վճարեցին ԱՄՆ-ին՝ իրանական նավթի հարցում իրենց «պաշտպանելու» փոխարեն։ Այդ համաձայնագրության հետևանքով անգլիական լեյբորիստական կառավարությունը 1951 թ. մայիսի 19-ին իրանական կառավարությանը ներկայացրեց խիստ բնույթի նոտա, որով չէր ճանաչում իրանական մեջլիսի «միակողմանի» օրենքը «Անգլո-իրանական նավթային ընկերության» հետ 1933 թ. կնքած պայմանագիրը չեղյալ հայտարարելու մասին, և սպառնալից ձևով եզրափակում էր, որ եթե իրանական կառավարությունը չհամաձայնվի Անգլիայի հետ, մերժի անգլո-իրանական բանակցությունը՝ «նոր պայմանագիր կնքելու համար և «միակողմանի» անցկացնի նավթային արդյունաբերության ազգայնացումը, դրանով նա «Անգլո-իրանական հարաբերությանը կհասցնի խիստ հարված, որը և կունենա լուրջ հետևանքներ»[2]։

Անգլիական այս նոտային զուգընթաց Իրանի կառավարությանը ներկայացվեց ԱՄՆ-ի հայտարարությունը, որը ըստ էության ամբողջապես պաշտպանում էր անգլիական տեսակետը, միջամտելու Իրանի ներքին գործերին։

ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի հայտարարությունը, իրանական կառավարական շրջանների համար անսպասելի էր։ Իրանի արտաքին գործերի մինիստր Ղազեմին 1951 թ. մայիսի 21-ին ԱՄՆ-ի դեսպան Գրեյդիին ներկայացրեց իրանական կառավարության պատասխանը, որի մեջ ասված էր՝

[1] Новое Время, № 27, стр. 13, 1951 г.
[2] „Правда", 21 мая 1951 г.

«Ամերիկյան կառավարության հայտարարությունը հանդիսացավ անսպասելի և իրանական հեղինակավոր շրջանների վրա թողեց ոչ նպաստավոր տպավորություններ... Քանի որ մինչև այդ ամերիկյան պաշտոնական շրջանները նավթի հարցում հայտարարում էին իրենց չեզոքությունը, իրանական ազգը սպասում էր, որ այդ գիրքը կպահպանվեր...»[1]։

Որպեսզի խանգարեն իրանական ժողովրդին՝ իրագործելու երկրի նավթային արդյունաբերության ազգայնացման գործը, անգլո-ամերիկյան իմպերիալիստները սկսեցին գործադրել շանտաժի և ահաբեկման մեթոդը։ Այսպես, օրինակ՝ իրանական «Թոլոս» թերթի հաղորդման համաձայն, Թեհրանի անգլիական «Միդլենդ բանկը» անմիջապես փակեց Իրանին բաց թողնվող ամեն տեսակի վարկերը։ Այդ նշանակում էր «տնտեսական և ֆինանսական յուրահատուկ ճնշում» Իրանի վրա։ «Բախտիար-ե Էմրուզ» թերթը գրեց, որ «Լոնդոնի շրջաններում քննարկվել է Աբադանի նավահանգստից անգլիական նավթատար նավերը դուրս բերելու հարցը, որպեսզի Իրանը հնարավորություն չունենա արտահանելու իր նավթը»[2]։ «Դադ» թերթը հաղորդեց այն մասին, որ ԱԻՆ-ը հրաժարվեց բենզին մատակարարելու իրանական քաղաքացիական ավիացիային»[3]։

Իրանական «Թեհրան—ե մասավվեր» ժուռնալը գրեց՝ «Մոտ օրերս Թեհրան ժամանեց «կարևոր մի անձնավորություն», որը հանդիսանում է անգլիական հետախուզության պատասխանատու աշխատակիցներից մեկը, Թեհրանի իրազեկ շրջաններում այս դիտվեց որպես անգլիացիների կողմից Իրանում տարվող հատուկ լրտեսական ինտենսիվ աշխատանքի սկիզբ»[4]։

1951 թ. մայիսի 26-ին ԱՄՆ-ի դեսպան Գրեյդին Իրանի արտաքին գործերի մինիստր Ղազեմիին հանձնեց Իրանի հարավային նավթի և իրանա-անգլիական հարաբերությունների մասին սպառնալիքներ կրող նոր նոտա՝ հայտարարելով, որ ամերիկյան կառավարությունը դեմ է պայմանագրային պարտավորությունները միակողմանիորեն չեղյալ հայտարարելուն, դեմ է բոլոր այն գործողություններին, որոնք բռնագրավման բնույթ են կրում։

Ամերիկա-անգլիական գիշատիչ իմպերիալիստների նման եղանակով Իրանի ներքին գործերին միջամտելը առաջ բերեց իրանական աշխատավոր լայն զանգվածների, պրոգրեսիվ ինտելիգենցիայի պայքարի և ցասման նոր ալիք։ Իրանի շատ քաղաքներում 1951 թ. մայիսի 29-ին, «Անգլո-իրանական նավթային ընկերության» հետ 1933 թ. կնքված կոնցեսիոն պայմանագրի ստորագրման 18-րդ տարեդարձի կապակցությամբ տեղի ունեցան բողոքի մասսայական միտինգներ և ցույցեր ընդդեմ ամերիկա-անգլիական իմպերիալիզմի։ Թեհրանում գումարված 80 հազարանոց միտինգը, որը տևեց 3 և կես ժամ, վերջում փոխվեց մինչև այդ Իրանում չտեսնված բողոքի մեծ ցույցի։ Միտինգի մասնակիցները միաձայն ընդունված բանաձևում կառավարությունից պահանջեցին՝ ա) Իրանի ողջ արդյունաբերությունից իսպառ չհեղոքացնել իմպերիալիստական գիշատիչներին. բ) անմիջապես, առանց որևէ կոմպրոմիսի իրագործել Իրանի ամբողջ նավթային արդյունաբերության ազգայնացումը. գ) վերջ դնել անգլիական և ամերիկյան իմպերիալիստների կողմից

[1] „Правда", 23 мая, 1951 г.
[2] „Правда", 27 мая, 1951 г.
[3] Там же.
[4] Там же.

Իրանի ներքին գործերին միջամտելուն, դ) վերացնել Խուզիստանում հայտարարված ռազմական դրությունը, ե) պարտիաների, պրոֆմիությունների և բոլոր դեմոկրատական ընկերությունների համար սահմանել ազատ գործելու օրենք, զ) սահմանել 8-ժամյա աշխատանքային օր, է) ընդունել պետական օրգանների ընտրական այնպիսի օրենք, որով ապահովվի ամբողջ բնակչության ազատ ու հավասար մասնակցության իրավունքը։

Ամերիկյան էքսպանսիոնիստները շտապում են արտակարգ միջոցներով խափանել իրանական ժողովրդի ձգտումները և շարունակում ավելի կոպիտ եղանակով միջամտել Իրանի ներքին գործերին։ 1951 թ. հունիսի 1-ին ԱՄՆ-ի դեսպան Գրեյդին Իրանի պրեմյեր-մինիստր Մոսադդիկին ներկայացրեց Տրումենի «անձնական ուղերձը», որով ԱՄՆ-ի պրեզիդենտը հրամայական տոնով պահանջում էր անմիջապես իրանական նավթի կապակցությամբ սկսել անգլո-իրանական բանակցությունները»։

Տրումենի «ուղերձը» հանդիսացավ Իրանի ներքին գործերին միջամտելու նոր արտառոց փաստ և առաջ բերեց պրոգրեսիվ հասարակայնության մեջ բողոքի նոր ալիք։ Թեհրանի «Քեսրա» թերթը, ըստ երևույթին ի նկատի ունենալով Միացյալ Նահանգների կառավարության կողմից անցյալում տրված հայտարարությունը՝ Իրանի ներքին գործերին չխառնվելու վերաբերյալ, Տրումենի այդ վարմունքը համարեց «իրանական ժողովրդի թիկունքին դաշույնով հարված հասցնել»։

Ամերիկյան իմպերիալիստները ելնելով իրենց մոնոպոլիստական կապիտալի շահերից, շարունակում են խառնվել Իրանի ներքին գործերին, և ըստ էության իրենց վրա են վերցնում անգլո-իրանական կոնֆլիկտի «միջնորդի» դերը։ Միացյալ Նահանգները բոլոր միջոցներով աշխատում են հասնել այն բանին, որպեսզի իրանական կառավարությունը վերանայի նավթային արդյունաբերության ազգայնացման վերաբերյալ օրենքը։

Այն պահից, երբ ԱՄՆ-ի և Անգլիայի միջև Հեռավոր և Մերձավոր Արևելքի վերաբերյալ հարցերում ստեղծվեց քաղաքական լայն գործարք, ամերիկյան մամուլը, ելնելով «հեռավոր նշանակության» քաղաքականությունից, կոչ արեց ամերիկյան նավթային մագնատներին «ինքնասահմանափակվելու» իրանական նավթի հափշտակման գործում։ Սակայն ամերիկյան նավթային մագնատների ախորժակը խիստ գրգռված լինելով, դժվար էր կենսագործել այդ առաջարկը։ Եվ ահա 1951 թ. հունիսին Աբադան ժամանեցին չորս ամերիկացիներ, որոնք սկսեցին համագործակցել իրանական ազգային նավթային ընկերության ներկայացուցիչների հետ։

Իրանական նավթի նկատմամբ ամերիկյան մոնոպոլիստների այս հարձակողական քաղաքականությունը, անգլիական իմպերիալիստների շրջանում առաջացրեց լուրջ դժգոհություն և անհանգստություն։ Համայնքների պալատի կառավարող շրջաններում հայտարարվեց «Իրանում ամերիկյան դաշնակիցների մի շարք ծայր աստիճանի անհաջող միջամտության» ինչպես և «նավթի բնագավառում դոլարի հեգեմոնիայի վերականգնման մասին»։

Չնայած ամերիկյան և անգլիական իմպերիալիստների միջև ստեղծված քաղաքական գործարքին, նրանց մեջ շարունակում էին գոյություն ունենալ լուրջ տարաձայնություններ, որոնք բխում էին իրանական նավթի նկատմամբ հեգեմոնիա ձեռք բերելու ձգտումից։ Ամերիկյան և անգլիական մոնոպոլիստները մի հիմնական հարցում հանդես են գալիս միացյալ ճակատով, այդ հարցն

է՝ բոլոր տեսակի միջոցներով խանգարել իրանական ժողովրդին՝ ինքնուրույնաբար օգտագործելու յուր սեփական նավթային հարստությունները։ Այդ նպատակով մոտիկ անցյալում անգլիական լեյբորիստական, իսկ այժմ պահպանողական կառավարությունները ամեն կերպ փորձում են սպառնալ ու ահաբեկել Իրանի կառավարությանը։ Նրանց կարգադրությամբ մարտական պատրաստության մեջ են դրվել զգալի քանակությամբ ռազմական ուժեր, այդ թվում ավիացիան, պարաշուտ-դեսանտային զորամասեր և այլն։ Բրիտանական ռազմական նավատորմիղի նավերը շարունակում են բերվել Պարսից ծոցը, մոտեցնելով իրանական ափերին։

Անգլիական միջոցառումների հետ միասին, ամերիկյան էքսպանսիոնիստները նույնպես անց են կացնում իրենց պլանները։ ԱՄՆ-ի գլխավոր շտաբի կարգադրությամբ 1951 թ. հունիսի 25-ից ամերիկյան չորս ականակիրներ Սինգապուրից ուղևորվեցին դեպի իրանական ջրերը, այնտեղ ամերիկյան «դրոշակը դեմոնստրացիա» անելու համար։

Այսպիսով, հարկադրական միջոցառումների կիրառմամբ անգլիական և ամերիկյան պետությունները թույլ Իրանի նկատմամբ հետապնդում էին ուժեղ պետության նվաճողականության նպատակներ, որպեսզի հարկադրեն նրան իրանական նավթի նկատմամբ համաձայնելու իրենց միջոցառումների հետ։

Անգլո-ամերիկյան իմպերիալիստների նման ռեպրեսիաները միայն օժանդակեցին իրանական ժողովրդի ակտիվության բարձրացմանը, դուրս բերեցին նրան պայքարի յուր հայրենիքը իմպերիալիստական պետությունների հիրաններից վերջնականապես ազատագրելու համար։ Իրանական պրոգրեսիվ մամուլը կոչ էր անում պետությանը՝ ցուցաբերել վճռականություն և կայունություն ընդդեմ անգլո-ամերիկյան սպառնալիքների, հետևողականորեն իրականացնել նավթային արդյունաբերության ազգայնացման օրենքը։ Թեհրանի «Թեհրան— ե մոսավար» շաբաթաթերթը հայտարարեց, որ եթե մեջլիսն ու սենատը ընթանան ամուր դիրքերով, իրանական ժողովուրդը նրանց ցույց կտա անհրաժեշտ օժանդակություն։

Ամերիկյան իմպերիալիստները ավելի բացահայտորեն սկսեցին միջամտել Իրանի ներքին գործերին, երբ իրենց «կրտսեր» գործակցի պահանջները Իրանի նավթի վերաբերյալ, Իրանի կողմից հանաչվեցին ապօրինի։ Իրանի աշխատավոր ժողովուրդը և նրա ճնշման տակ կառավարությունը վճռականորեն դեմ արտահայտվեցին և չճանաչեցին Հաագայի միջազգային դատարանի որոշումը։ 1951 թ. հուլիսի 9-ին Իրանում ԱՄՆ-ի դեսպան Գրեյդին պրեմյեր-մինիստր Մոսադդիկին հանձնեց ԱՄՆ-ի պրեզիդենտ Տրումենի նոր նամակը, որտեղ Տրումենը պնդում էր, որպեսզի իրանական կառավարությունը ենթարկվի միջազգային դատարանի որոշմանը և առաջարկում էր Թեհրան գործուղել «իր ամենամոտիկ խորհրդատուներից մեկին՝ Հարբիմանին, «նավթային պրոբլեմը լուծելու համար»։

Այսպիսով, Տրումենը պաշտոնապես առաջարկելով իր «միջնորդությունը» իրանական նավթի հարցում, բաց արեց ԱՄՆ-ի անդրկուլիսյան խաղի քարտերը։

Տրումենի նամակի հրապարակումից հետո, անգլիական պետական շրջաններում առաջ եկավ տագնապային դրություն։ Հատկապես արտաքին գործերի մինիստրության և «Անգլո-իրանական նավթային ընկերության» շրջան-

ներում համոզվեցին, գրում է անգլիական «Դեյլի ուորկեր» թերթի դիվանագիտական տեսաբանը՝ «...որ Հարրիմանի ուղևորությունը Թեհրան՝ հանդիսանում է անգլիական ընկերություններն այնտեղից ամբողջովին դուրս մղելու ջանքերի դրսևորումներից մեկը»։ Ապա շարունակելով, տեսաբանը գրում է, «...Իրանում անգլիական դեսպանը հայտարարել է, որ անգլիական կառավարությունը այլևս հավանություն չի տալիս այդ միսիային... որ Հարրիմանի միսիան ձեռնարկել է երեք ճակատով կատարվող հարձակմանը համապատասխան, որը նպատակ ունի Անգլիային դուրս մղել Իրանից...»[1]։

Միացյալ Նահանգները, օգտվելով Անգլիայի համար ստեղծված դրությունից, ձգտում են «միջնորդության» պատրվակով Իրանի նավթը վերցնել իրենց ձեռքը։ ԱՄՆ-ի նավթային մոնոպոլիստները պատրաստվում են հանդես գալու «Անգլո-իրանական նավթային ընկերության» ժառանգի դերում։ Ըստ իրանական «Էթթիլաթ» թերթի հաղորդման, ամերիկյան մեկ նավթային ընկերություն «պատրաստ է Իրան ուղարկելու երկու հազար ինժեներա-տեխնիկական մասնագետների», որոնց նպատակն էր լինելու նավթահանքերի վրա սահմանել իրենց վերահսկողությունը։

Ամերիկյան մամուլը նույնպես բացե ի բաց հայտարարում է Ուոլստրիտի պլանների մասին։ Վաշինգտոնից «Ասոշիեյտեդ պրեսս» գործակալությունը հաղորդեց, որ «Էի-ֆակտորս ինկորպորեյտդ» ֆիրմայի վիցե-պրեզիդենտը արդեն հանդես է եկել 1500 ամերիկյան նավթային մասնագետներ Իրան գործուղելու առաջարկությամբ։

«Մենք հասկանում ենք,— հայտարարել է վիցե-պրեզիդենտը,— որ Իրանում մտադիր են ազգայնացնելու նավթային արդյունաբերությունը և, որ Անգլիան այնտեղից կչեզոքացվի։ Մենք գտնում ենք, որ անհրաժեշտ կլինի այնտեղ ուղարկելու ամերիկյան մասնագետներ»։ Նման ակտիվություն է հանդես բերում նաև Մերձավոր Արևելքում գործող ամերիկյան խոշորագույն ռոկֆելլերովյան Սաուդյան Արաբիայի ամբողջ նավթը մոնոպոլիայի ենթարկած «Aramco» (Arabian-American company) ընկերությունը, առաջարկելով իրանական կառավարությանը իրեն հանձնելու հարավ-իրանական նավթի շահագործումը, որի դիմաց խոստանում է Իրանին հանձնելու նավթից ստացված եկամուտի 75 տոկոսը։

Ամերիկյան նավթային մագնատի այս առաջարկության նպատակն էր իրագործելու ռոկֆելլերների վաղուցվա տենչանքը, համաշխարհային նավթային մոնոպոլիայի ստեղծման մասին, այդ ընկերության նպատակն էր զավթել ոչ միայն Հյուսիսային և Հարավային Ամերիկայի նավթային աղբյուրները, այլև Մերձավոր և Միջին Արևելքի բոլոր երկրների նավթը։ Ըստ «Ասոշիեյտեդ պրեսս» գործակալության հաղորդման, Միացյալ Նահանգների կառավարությունը 1951 թ. առաջին կիսամյակի սկզբներից ստեղծեց «Օտարերկրյա պետությունների նավթի մատակարարման կոմիտե»։ ԱՄՆ-ի ներքին գործերի մինիստրի նշանակումը այդ կոմիտեի անդամ և «Ստանդարտ օյլ Կոմպանի օֆ Նյու-Ջերսիի» նավթային ընկերություններից մեկի դիրեկտորի առաջադրվելը որպես այդ ընկերության նախագահ, միայն հաստատում են ռոկֆելլերների վաղուց ի վեր երազած պլանների իրագործումը։ Նույն գործակալության հայտարարության համաձայն ստեղծված կոմիտեն պարտավոր է ուսում-

[1] „Daily Worker", 14 July, 1951 y.
[2] Новое время, № 29, стр 13, 1951 г.

նասիրել նավթային ճգնաժամի հարցը Իրանում և մշակել «բարեկամ» երկրներին «արտակարգ» հանգամանքներում նավթով մատակարարելու պլանները։ Այսինքն, ավելի որոշակի ասած, նավթի բաշխման հարցում հաստատել ամերիկյան մոնոպոլիստների հեգեմոնիան, ամերիկյան նավթային մագնատներին հանձնել կապիտալիստական աշխարհի նավթի տնօրինությունը։

Ամերիկյան մոնոպոլիստների կողմից «բարեկամ երկրներին» նավթ մատակարարելու «պլանավորումը» նշանակում է՝ այդ երկրները քաղաքականապես և տնտեսապես ենթարկել ԱՄՆ-ին։ Իրանական «Աթեշ» թերթի տվյալներով՝ անգլիական «Էյշետիկ Պետրոլյում» ընկերությունը Իրանի նավթից զրկվելու հետևանքով հարկադրված պիտի լինի ամերիկյան «Ստանդարտ Վոկում օյլ» ընկերությունից գնել տարեկան 3 միլիոն բարել նավթ (մեկ բարելը հավասար է 1 7 տոննայի)։ Անգլիայի ֆինանսների նախկին լեյբորիստ մինիստր Դեյտըսկելը 1951 թ. հուլիսի 4-ին պրեսկոնֆերանսում հայտարարեց, որ Իրանի նավթը կորցնելու հետևանքով առաջանալիք վնասների փոխհատուցումը Անգլիային տարեկան կնստի 350 միլիոն դոլլար[1]։

Տրումենի «հատուկ գործերի» օգնական Հարրիմանի Իրան մեկնելն առաջին հերթին պայմանավորված էր նրանով, որ խանգարի և թույլ չտա Իրանին իրագործելու նավթային արդյունաբերության ազգայնացման օրենքը։ Միացյալ Նահանգները խիստ մտահոգված էին այն բանով, որ Իրանի դեպքերը Մերձավոր Արևելքի երկրների վրա թողնում են իրենց ազդեցությունը։

Ավերելլ Հարրիմանը— պրեզիդենտ Տրումենի անձնական ներկայացուցիչն էր, մերձավոր խորհրդատուն արտաքին հարաբերությունների հարցերում, միաժամանակ մորգանների տան ներկայացուցիչներից մեկը։ Ահա թե ինչու Տրումենի ընտրությունը կանգ առավ հատկապես Հարրիմանի վրա։ Հարրիմանի միսիայի կազմի մեջ մտցվեց Մարշալլի պլանի իրագործման վարչության նավթային բաժնի նախկին կառավարիչ Վալտեր Լեին, որը սերտորեն կապված էր ԱՄՆ-ի նավթային ընկերությունների հետ։

Հարրիմանի միսիայի Թեհրան ժամանելու օրը, 1951 թ. հուլիսի 15-ին մայրաքաղաքի բնակչությունը կազմակերպեց բողոքի մասսայական դեմոնստրացիա։ Դեմոնստրացիան ընթացավ նախկին «Անգլո-իրանական նավթային ընկերության» և ամերիկա-անգլիական իմպերիալիստների Իրանում վարած կողոպտման քաղաքականության դեմ ուղղված լոզունգներով։ Ցուցարարները պահանջում էին անմիջապես և լրիվ կերպով կիրառել նավթային արդյունաբերության ազգայնացումը, վերջ դնել ամերիկյան և անգլիական իմպերիալիստների Իրանի ներքին գործերին միջամտելուն։ Ոստիկանությունը գործադրեց ցուցարարների դեմ արտասովոր դաժան միջոցներ։ Ընդդեմ ցուցարարների դուրս բերվեցին տանկեր և զրահապատ ավտոմեքենաներ։ Իրանական իշխանությունները աշխատում էին հանգստացնել Հարրիմանին, հավաստիացնելով, որ այդ ցույցը առնչություն չունի նրա ժամանման հետ, սակայն Հարրիմանը պատասխանեց՝ «ես սովոր եմ իրերի նման դրությանը։ Այդ տեղի է ունենում ամենուրեք, ուր ես գնում եմ»[2]։

Թեհրան ժամանելու հետևյալ օրը Հարրիմանը պրեմյեր-մինիստր Մոսադդիկի հետ ունեցավ յուր առաջին զրույցը և պահանջեց Անգլիայի հետ տեղի ունեցած կոնֆլիկտը «կարգավորել բավարար եղանակով»։ Բայց որով-

[1] Новое время, № 29, стр. 12, 1951 г.
[2] Там же, № 32, стр. 10, 1951 г.

հետև այդ «կարգավորումը նշանակում էր «նավթային արդյունաբերության ազգայնացման օրենքի վերանայում», Մոսադդիկը Հարրիմանի այդ առաջարկությունը մերժեց։

ԱՄՆ-ը փորձում է նոր ճնշման միջոցով հարկադրել Իրանի կառավարությանը ընդունել ամերիկյան առաջարկները։ 1951 թ. հունիսի 18-ին ամերիկյան կառավարությունը որոշում է Իրանին ցույց չտալ ֆինանսական, ռազմական օգնություն, այնքան ժամանակ, մինչև չկարգավորվի նավթային արդյունաբերության ազգայնացման վեճը։ Դրանով, ինչպես հաղորդում է «Նյու-Յորք էնդ Ամերիկեն» լրագիրը, ԱՄՆ-ը և Անգլիան որոշեցին «նավթով հարուստ կայսրությունը ենթարկել էֆեկտիվ, սակայն ոչ հայտարարված տընտեսական բոյկոտի»[1]։ Դրան հետևում են ամերկյան մամուլի մի շարք սպառնալիքները՝ արևմտյան բոլոր երկրների կողմից բոյկոտի ենթարկելու իրանական նավթը, եթե Իրանը չհամաձայնվի Հարրիմանի առաջարկներին։

Նման հարկադրանքներից և ճնշումներից հետո է, որ Հարրիմանը և նրա խորհրդատու Լևին մասնակցում են իրանական նավթի ազգայնացման խառը հանձնաժողովի նիստին։ Հարրիմանը այդ նիստում «սպառնալից խիստ տոնով հայտարարում է, որ եթե նրանք շարունակեն անհողդողդ կերպով պնդել իրենց տեսակետները, նրանց չի հաջողվի վաճառելու ոչ մի գույլ նավթ»։ Հարրիմանի և իրանական կառավարության միջև ի վերջո 1951 թ. հուլիսի 26-ին տեղի է ունենում նախնական կոմպրոմիսային համաձայնություն։ Ըստ իրանական «Քեսրա» թերթի, այդ համաձայնության համաձայն իրանական հարավային նավթը շահագործելու համար նախատեսվում է ստեղծել երկու ընկերություն։ Դրանցից մեկը լինելու էր բացառապես իրանական և պետք է զբաղվեր նավթի հանույթի և զտման գործով. իսկ մյուսը լինելու էր խառը և զբաղվելու էր հանույթի զտման վերահսկողությամբ ու նավթամթերքները արտասահմանում վաճառելու գործով։ Երկրորդ ընկերության բաժնեվճարները նախատեսվում էր բաժանել Իրանի, ԱՄՆ-ի և Անգլիայի միջև հավասարապես, իսկ վարչությունը պետք է բաղկացած լիներ երկու անգլիացիներից, երկու ամերիկացիներից և երկու իրանցիներից։

Անգլիական մամուլը և արտաքին գործերի նախկին մինիստր Մորիսոնը բացասաբար արտահայտվեցին կոմպրոմիսային այդ համաձայնության մասին։ Մորիսոնը համայնքների պալատում 1951 թ. հուլիսի 25-ին հայտարարեց, որ անգլիական կառավարության համար ցանկալի է ստանալ «իրանական կառավարության լրացուցիչ ինֆորմացիան այդ հարցի կապակցությամբ, քանի որ Իրանի դիրքը որոշակիորեն դեռ պարզ չէ»[2]։

Սակայն իրերի հետագա զարգացումը ցույց տվեց, որ բանը «իրանական կառավարության դիրքի պարզ չլինելու մեջ» չէր, այլ նրանում, որ անգլիական իմպերիալիստները ցանկանում էին իրենց համար պարզել, թե ԱՄՆ-ի կապիտալ ներդրումը իրանական նավթի արդյունաբերության մեջ որ չափով է խփելու անգլիական կապիտալի շահերին։ Ահա թե ինչու Հարրիմանը այդ գործարքը կարգավորելու համար 1951 թ. հուլիսի 28-ին Թեհրանից շտապ թռավ Լոնդոն, հայտարարելով թղթակիցներին, որ «նրա բանակցությունները Լոնդոնում պարզություն կտմցնեն այդ չափազանց նուրբ հարցի մեջ»[4]։

[1] „Правда", 19 июля, 1951 г.
[2] Там же, 20 июля, 1951 г.
[3] Там же, 26 июля, 1951 г.
[4] Там же, 29 июля, 1951 г.

ԱՄՆ-ի և Անգլիայի միջև Լոնդոնում տեղի ունեցած բանակցությունները ավարտվեցին ի հաշիվ Իրանի գործարք կնքելով. 1951 թ. հուլիսի 29-ին անգլիական կողմը Իրանի կառավարությանը հանձնեց բանակցությունների վերսկսման մասին հակաառաջարկությունները։

1951 թ. օգոստոսի 6-ին Թեհրանում, Հարրիմանի անմիջական մասնակցությամբ Իրանի և Անգլիայի կառավարությունների միջև սկսվեցին բանակցությունները և նույն թվականի օգոստոսի 22-ին վերջացան լրիվ ձախողմամբ։

Չնայած այն բանին, որ Հարրիմանը գործադրեց շատ ճիգ ու ջանք, որպեսզի չձախողվեն բանակցությունները և խառնվեց այդ բանակցությունների մեջ այնքան բացահայտորեն, որ արտասահմանյան մամուլը սկսեց գրել ոչ թե «երկկողմանի», այլ «եռակողմանի» բանակցությունների մասին, այնուամենայնիվ դրանք չպսակվեցին հաջողությամբ։

Անգլիական դելեգացիայի ղեկավար լորդ կնքապահ Ռիչարդ Ստոկսը, բանակցությունների ընթացքում, 1951 թ. օգոստոսի 19-ին առաջարկեց նավթային կոնֆլիկտի կարգավորման այն պլանը, որը մշակվել էր Լոնդոնում Հարրիմանի անմիջական մասնակցությամբ։ Ռիչարդ Ստոկսի կողմից առաջարկված պլանը նախատեսում էր «Անգլո-իրանական նավթային ընկերությունը» փոխարինել երկու նոր ընկերություններով՝ «օպերատիվ» և «գնող» ընկերություններով, որոնց իրավասության տակ պետք է անցնեին բոլոր գործերը, կապված հետախուզության, հանույթի, վերամշակման և արտասահմանում իրանական նավթի վաճառքը կազմակերպելու հետ։

Նավթային կոնֆլիկտի «կարգավորման պլանը» ըստ էության նախատեսնում էր նավթային արդյունաբերությունն ազգայնացնելուց հետո իրանական կառավարության կողմից ստեղծված «իրանական ազգային նավթային ընկերությունը» ծառայեցնելու որպես ցուցանակ, ծածկելու վերոհիշյալ երկու ընկերությունների գործունեությունը, ուր աներկբայորեն կարգադրիչներն էին հանդիսանալու ամերիկյան և անգլիական մագնատները։ Ահա թե ինչու իրանական կողմը վճռականորեն մերժեց նման «կարգավորման պլանը», հայտարարելով, որ նա «Անգլո-իրանական նավթային ընկերությանը» ոչ մի գնով թույլ չի տա «նորից երևան գալու Իրանում, ինչ որ նոր ցուցանակի տակ»[1]։

Իրանական առարկմանը հետևեց Ստոքսի ուլտիմատիվ առաջարկությունը՝ բոլոր գործերը վարելու համար նշանակել «անգլիական գլխավոր դիրեկտոր», որն ըստ էության ոչնչով չէր փոխում դրությունը, և բոլոր դեպքերում էլ իրանական նավթային ընկերությունը վերցնում էր օտարերկրյա իմպերիալիստների վերահսկողության տակ։ Այնուհետև Ստոքսի ուլտիմատումին հետևում է Հարրիմանի կողմից Իրանի պրեմյեր-մինիստր Մոսադդիկին ուղղված նամակը, որով նա աշխատում է Իրանի վրա ուժ գործադրելու միջոցով հարկադրել վերջինիս՝ համաձայնվելու ամերիկա-անգլիական առաջարկություններին։ Սակայն ոչ Ստոքսի և ոչ էլ Հարրիմանի միջոցառումները չեն տալիս իրենց համար ցանկալի հետևանքներ։

Ամերիկյան և անգլիական իմպերիալիստների ջանքերը այս անգամ Իրանում պսակվեցին անհաջողությամբ և նրանց պլանները տապալվեցին։ Նրանց չհաջողվեց Իրանի վզին փաթաթել իրենց ստրկացուցիչ պլանները, որոնք ի չիք

[1] „Правда", 20 августа, 1951 г.

էին դարձնում Իրանի ժողովրդի երկարամյա պայքարը հանուն իր հայրենիքի ազատագրման՝ անգլո-ամերիկյան իմպերիալիզմի շահագործումից։

Ամերիկա-անգլիական իմպերիալիստները նավթի հարցում Իրանում պարտություն կրելով, փորձում են այս հարցը լուծել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում, իրանական կոնֆլիկտին տալ միջազգային բնույթ, օգտագործել ՄԱԿ-ում իրենց տիրապետող դիրքը, վախեցնել Իրանին և նրա նավթային արդյունաբերության վրա սահմանել ՄԱԿ-ի «խնամակալությունը», այսինքն, հանձնել ԱՄՆ-ի և Անգլիայի իմպերիալիստների տնօրինությանը։ Դրանով կարելի է բացատրել Միջազգային վերակառուցման և զարգացման բանկի ներկայացուցչի ջանքերը Թեհրանում, որոնց նպատակն էր Իրանի նավթը հանձնել այդ բանկին։ Թեհրանի «Աթեշ» թերթի հաղորդման համաձայն իրանական նավթային ռեսուրսների ինտերնացիոնալիզացիայի «նախագիծը»՝ ՄԱԿ-ի ցուցանակի տակ մերժվեց, որպես նավթային արդյունաբերության ազգայնացման օրենքի ոգուն անհամատեղելի միջոցառում։

Իրանի կառավարության դիմադրություններին, որոնք տեղի էին ունենում ժողովրդի ճնշման տակ, ամերիկյան իմպերիալիստները պատասխանում էին շանտաժի բացահայտ նոր մեթոդներով։

Լիբանանի «Բեյրութ» թերթը գրում էր. «ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը Իրանի ամերիկյան դեսպանին ցուցմունք տվեց, շտապել արագացնելու «անվտանգության փոխադարձ ապահովման օրենքի» հիման վրա Իրանին ցույց տրվող ամերիկյան օգնության համաձայնագրի երկարաձգման առթիվ իրանական կառավարության հետ տեղի ունենալիք բանակցությունները, միաժամանակ, վճռականորեն նախազգուշացնելով դեսպանին, որ «այժմս» ավելի քան երբևիցե ամերիկա-իրանական հարաբերությունների պատմության ամբողջ ընթացքում, ԱՄՆ-ը շահագրգռված է Իրանում ուժեղացնելու իրենց ազդեցությունը»[1]։

Այս բոլորի հետ մեկտեղ, իր ազդեցությունը Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում ուժեղացնելու նպատակով, Միացյալ Նահանգների պետական դեպարտամենտը այդ երկրները գործուղեց բազմաթիվ էմիսարներ։ Իրան գործուղվեց Մերձավոր Արևելքի, Հարավային Ասիայի և Աֆրիկայի գործերով ԱՄՆ-ի պետական քարտուղարի օգնական՝ Բայրոուդը։

Համաձայն իրանական մամուլի տվյալների, Իրանում Բայրոուդի միջոցառումների մեջ աչքի էր ընկնում երկու հանգամանք՝ 1) անգլո-իրանական կոնֆլիկտում «միջնորդության» պատրվակի տակ իրանական նավթը ԱՄՆ-ի ձեռքը դցելու հարցը, 2) ձգտել արագացնելու այսպես կոչված ամերիկյան «ռազմական օգնության» ծրագրի իրագործման պլանը։ Թեհրանի «Նաբարդ» թերթը որոշակի գրեց, որ «Բայրոուդը արտահայտեց ամերիկյան կառավարության բուռն ցանկությունը, որպեսզի Իրանը ընդգրկվի այսպես կոչված «Միջին Արևելքի պաշտպանման» սիստեմի մեջ»[2]։

Այդ միջոցառումներին զուգընթաց Միջազգային զարգացման և վերակառուցման բանկի ներկայացուցիչները սկսեցին զգալի ակտիվություն հանդես բերել, բանկ, որը ամբողջապես հանդիսանում է ամերիկյան քաղաքականության կենսագործողը։

ԱՄՆ-ի գործակալները «տեխնիկական օգնության» պատրվակի տակ, ըստ

[1] „Правда", 20 мая, 1952 г.
[2] Там же, 18 мая, 1952 г.

Տրումենի տխրահռչակ «ծրագրի 4-րդ կետի», իրանական իշխանությունների հետ կնքեցին մի շարք համաձայնագրեր, որոնք ուղի են հարթում ամերիկյան իմպերիալիստների համար՝ ներթափանցելու իրանական արդյունաբերության մեջ։

Այսպիսով, ամերիկյան իմպերիալիստները, շանտաժի, ճնշման և բռնության միջոցով, երկարատև նախապատրաստությունից հետո, հակառակ իրանական ժողովրդի կամքին, 1952 թ. ապրիլ ամսի վերջերին նորից ձեռք բերեցին իրանական կառավարության համաձայնությունը՝ 1950 թ. մայիսի 23-ին ԱՄՆ-ի և Իրանի միջև կնքված ռազմական օգնության վերաբերյալ համաձայնագրության վերականգնումը։

Իրանի կառավարության այս գործելակերպը նշանակում էր ոչ միայն երկիրը դնել ԱՄՆ-ի վերահսկողության տակ, այլև օգնել Միացյալ Նահանգների կառավարությանը նրա ագրեսիվ պլանների իրագործման գործում, պլաններ, որոնք ուղղված են ՍՍՌՄ-ի դեմ։ Ահա թե ինչո՞ւ, 1952 թ. մայիսի 21-ին ՍՍՌՄ Արտաքին գործերի մինիստր Ա. Յա. Վիշինսկին իրանական դեսպանին հանձնեց Սովետական կառավարության նոտան՝ Իրանի պրեմյեր-մինիստր Մոսադդիկի և Իրանում ԱՄՆ-ի դեսպան Հենդերսոնի միջև ապրիլի վերջին Իրանին ամերկյան «օգնության» վերաբերյալ նամակների փոխանակման մասին։

Նոտայում ասված է՝

«...Իրանի և ԱՄՆ-ի կառավարությունների միջև համաձայնություն է ձեռք բերվել Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից Իրանին ռազմական ու ֆինանսական օգնություն ցույց տալու մասին և որ Իրանի կառավարությունը յուր հերթին ստանձնել է ռազմական ու քաղաքական բնույթի որոշակի պարտականություններ»։

Այնուհետև նոտայում ասված է, որ «...Իրանական կառավարությունը այդ համաձայնության կապակցությամբ պարտավորվել է վերականգնել պայմանագրերը Իրանում ամերիկյան ռազմական խորհրդականների հետ։ Այդ բանը իրենց պաշտոնական հայտարարություններում հաստատել են սկզբ. ապրիլի 27-ին Իրանի Հաղորդակցության ճանապարհների մինիստր Բուշեհրին՝ մի կողմից, և ապրիլի 25-ին ԱՄՆ-ի Պետական Քարտուղարի Տեղակալ Մակգեր-ժոտը՝ մյուս կողմից։ Հայտնի է նաև, որ ամերիկյան ռազմական միսիան, որը սույն թվականի հունվարին դադարեցրել էր իր գործունեությունը... նորից վերսկսել է իր աշխատանքը, ընդորում կրկին սկսել է գործել նաև ԱՄՆ-ի ու Իրանի միջև 1950 թ. մայիսի 23-ին կնքված համաձայնագիրը ռազմական օգնության և Իրանում ամերիկյան ռազմական միսիայի վերաբերյալ։

Այսպիսով, վերոհիշյալ նամակների փոխանակման և իրանա-ամերիկյան ռազմական համաձայնագրի գործողության վերսկսման հետևանքով, Իրանի կառավարությունը իրանական բանակը գնում է ԱՄՆ-ի կառավարության վերահսկողության տակ։ Դրանով իսկ իրանական բանակը կորցնում է անկախ, սուվերեն պետության ազգային բանակի բնույթը։

Սովետական կառավարությունը անհրաժեշտ է համարում Իրանական կառավարության ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ համաձայնվելով ընդունել, այսպես կոչված, ամերիկյան օգնությունը և այդ կապակցությամբ Միացյալ Նահանգների հանդեպ ստանձնելով ռազմական բնույթի որոշակի պարտավորություններ, Իրանական Կառավարությունը փաստորեն

կանգնում է Սովետական Միության դեմ ուղղված ագրեսիվ պլանների իրականացման գործում ԱՄՆ-ի Կառավարությանը աջակցելու ուղու վրա»[1]։

Այսպիսով, Սովետական կառավարությունը հարկադրված եղավ իր այդ 21-ի նոտայով հիշեցնելու իրանական կառավարությանը որ՝

«Իրանի կառավարության նման գործողությունները չի կարելի դիտել այլ կերպ, քան որպես այնպիսի գործողություններ, որոնք անհամատեղելի են բարի-դրացիական հարաբերությունների վերաբերյալ դրույթների հետ, հարաբերություններ, որոնց պահպանումն ու ամրապնդումը 1921 թ. փետրվարի 26-ի Սովետա-իրանական պայմանագիրը ստորագրած կողմերի պարտավորությունն է»[1]։

Կասկածից դուրս է, որ 1950 թ. մայիսի 23-ի համաձայնագրի վերականգնումը բնավ չի արտահայտում իրանական ժողովրդի կամքը։ Հենվելով ամերիկյան իմպերիալիստների ռազմական «օգնության» վրա, իրանական ռեակցիան ավելի և ավելի է խճճվում ամերիկյան էքսպանսիոնիստների ցանցի մեջ։

Մարշալլականացված երկրների՝ Թյուրքիայի, Իրաքի, Հունաստանի, Եգիպտոսի և այլոց փորձի օրինակով, Իրանի կառավարող շրջանները պետք է համոզվեին, թե դեպի ուր է տանում ամերիկյան իմպերիալիստների այսպես կոչված տխրահռչակ «օգնությունը»։

Իրանի պետական գործիչները կարող էին վերհիշել Արևելքի մեծ պոետ, մտածող Սաադիի «Գուլիստան» կլասիկ ստեղծագործության հետևյալ տողերը.

Թռչունը չի թռչում ցրված ցորենին,
Երբ նկատում է թակարդ ընկած իր նմանին։
Ուրիշների դժբախտությունից վերցրու օրինակ,
Որ ուրիշին դու չլինես օրինակ։

Ամերիկա-անգլիական իմպերիալիզմի կողմից Իրանում տարվող գաղութացման քաղաքականությունը լավ է ըմբռնել իրանական ժողովուրդը։ Երկրի բազմաչարչար աշխատավորությունը լավագույն կերպով պատկերացնում է, որ իր հայրենիքի հետամնացության, իր թշվառության ու ընչաքաղցության գլխավոր պատճառը հանդիսանում են ամերիկա-անգլիական իմպերիալիստ գաղութարարները և նրանց ծախված ռեակցիոն տարրերը։ Ահա թե ինչու. նա այսօր իր բողոքի ու ցասման ձայնն է բարձրացնում ընդդեմ իմպերիալիստական գաղութարարների և երկրի ներսում գործող նրանց գործակալների։

20-րդ դարի երկրորդ կեսի սկզբին այլևս դոյություն չունի անցյալի նիրհող և պասսիվ Արևելքը, որը ներկայացնում էր կապիտալիզմի համար հսկայական ռեզերվներ և նրա գերշահույթի անսպառ աղբյուր։ Վաղուց անցել են այն ժամանակները, երբ Արևելքի ճնշված ժողովուրդները իմպերիալիզմի ճնշման դեմ պայքարի էին ելնում անջատ-անջատ, տարերայնորեն։

Սկսվել է մարդկության պրոգրեսիվ զարգացման նոր դարաշրջանը։ Այն նշանավորված է ՍՍՌՄ-ում Սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակի ստալինյան էպոխայով, ժողովրդական դեմոկրատիայի երկրներում սոցիալիզմի

[1] «Սովետական Հայաստան», 24 մայիսի, 1952 թ.։
[2] Նույն տեղում։

հաջող կառուցմամբ, Ասիայի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի հսկայական վերելքով և չինական ռևոլուցիայի հաղթանակով։

Իրանական ժողովուրդը, քաջ գիտակցելով իր ազատագրման համար մղվող պայքարի ուժեղացման անհրաժեշտությունը, հանդես է գալիս ընդդեմ ամերիկա-անգլիական իմպերիալիստների, ներքին ռեակցիայի՝ հանուն յուր անկախության, ազատության, դեմոկրատիայի և խաղաղության։ 1952 թ. հուլիսի երկրորդ կեսից հետո երկրում ծավալվող քաղաքական դեպքերը հանդիսանում են իրանական աշխատավորության հակաիմպերիալիստական պայքարի ապացույցը։

Մեռնող, փտող ու քայքայվող իմպերիալիզմը և երկրի ռեակցիան չեն կարող ետ դարձնել Իրանի աշխատավորության ժողովրդա-ազատագրական շարժումը, նրա պրոգրեսիվ զարթոնքի, իմպերիալիզմի դեմ պայքարի ընթացքը։